


ուայեն միայն գժրախտին, որբին, կարօտին, աղքատ վարժարանին նպաստի բաժինը պակսեցնելու: Բարեգործականի թշնամին է ամենէն առաջ եւ անոր գժրախտութիւնը անպաշտպան եւ անօգնական թողլու ոճարագործ մտայնութիւնն է որ երևան կը բերէ իր այդ ընթացքով,

Ժողովուրդները՝ իրենց արժէքը կը չենին այն գործունէութիւններով՝ որոնք կը ձգտին այդ ժողովուրդի հաւաքական արժէքը ներկայացնել, իրրեւ մարդկային ընտանիքը կազմով մէկ մասնիկը՝ իրենց հոգին եւ զգացումներու ազնուական արտայայտութեամբը, որ չափը կուտայ իրենց հոգեկան բովանդակութեան: Եթր օտարները մեզ ուզեն ճանչնալ, մեր առները չէ որ կ'այցելին, այլ մեր եկեղեցիները, վանքերը, թանգարանները, պարոցներն ու հաստատութիւնները՝ տեսնելու համար թէ այս ժողովուրդը իր սեփական կաշի պահպանութեան մամուռքներէն վեր, ինչ ունի ամենէն աւելի բարձր և ազնուական, որով կրնայ արժանի նկատուիլ քաղաքակիրթ ժողովուրդներու կողքին իր սեփական ամուռու զնելու և այս տեսակէտով հայ մտքի և սրտի ստեղծագործութիւնը եղող Հ. Բ. Բ. Միութիւնը պատուաբեր զրաւական մընէ մեզի ալ աթոռ մը ապահովելու չափ քաղաքակիրթ ժողովուրդներու կողքին, մեր այլապէս բարձր եւ զարաւոր արժէքներու հետ: Գիտնանք մեր արժէքները զընահատել, և զանոնք ուժովցնել, մեր պատիւը եւ մեր փրկութիւնը շինելով նոյն ատեն: Բարեգործականի հիմնարկութիւնը և գործը մեր պատիւն է և փրկութեան պատհովութիւնը:

Դ. ՄիԱԼԵԱՆ



Մարդիկ իւնաց բարիեներուն (հարստութեան) մասակարաներն են: Ազուած, որ զեւազոյն Տէրն է, յօնձնեց զանոնք հարուստերուն՝ որպէս զի օգնեն աղբաներաւ:

Օսկերեան



ՅՈՒՆԻԵԱՆՆՐ

1930- ը նշանակելի տարի մը պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար, որ այլեւայլ առիթներով եւ կերպերով ծրագրած է զնանաւակ իր վաստակաւոր զաւակներու արժանիքը առաջիկայ բանի մը ամրաներու ընթացքին:

Ժամանակազրական կարգով ասոնց առաջինն է Ա. Անարաննեանին զրական զործունէութեան Քառասնամեկը: Անցեալ տարի յայտարարուեցաւ Ա. Անարաննեանի Ցորդինանը եւ նոյն տանը Սինն փոթաց ողջունել մեծանուն Գրագիտ իրեն ընծայութիր հրապարակային յարգանքին առթիւ: Անարաննեան մեր նոր գրականութիւնը առեղծագործող օյմերան ամենէն իշխանութերէն մէկն է: Կ'ողջունենք ոսկի զրչի եւ զեղեցիկ խօսքի վարպետ՝ Անարաննեանը, իր Ցորդինանին առթիւ:

Երկրորդն է Փրօֆ. Կ. Թումայեանի ուսուցչական զործունէութեան Յիսոնամեայ Ցորդինանը, որ պիտի կատարուի նիւ Եորքի մէջ: Թումայեան լոնտոն կը բնակի եւ իր նիւ Եորք մեկնումէն յառաջ թէ՝ Լոնտոնի եւ թէ՛ Մանչէսթրի մէջ հանդէններ կազմակերպուած են շնորհաւորելու համար վաստակաւոր ուսուցչիք: Թումայեան մէկն է մարդի այն աշխատաւորներէն որոնք ուղղակի կրեցին համբանեան հալածանքներուն արհաւիրըները, ազգասէր եւ պարկէշ հայեր ըլլանուն համար: Փրօֆ. Թումայեան Անկիւրոյ բանտին մէջ կրեց շղթաներուն ծանրութիւնը եւ զեղոյնին պրկումը իր բազուկներուն վայ, եւ իր գրեխն ալ վրայ պիտի տար, եթէ իր ազնի Տիկնոց աղաղակներով Անզիահ չազաւաէր զինքը, Թիւրքիայէն դուռը կլելու պայմանաւ: Փրօֆ. Թումայեան ողջամիտը, իր ազգը իրապէս պիտոց փորձառու հայ մըն է, եւ հնդինակ պատմական զործերուն Կ'ողջունենք Ազգային զործիչ եւ ուսուցիչ բազմավառի Ռւսուցչապետը:

Երրորդ, Նիկոմիդիոյ բազմերախտ Առաջնորդ Գէր. Տ. Ստեփանոս Ս. Արքայոս. Յովակիմեանի Վաթնամեայ Քահանայութեան Ցորդինանը, որ պիտի առաջարարուի Ցունիսի մէջ, Սօֆիա:

Ստեփանոս Սրբազնի եկեղեցական կենտրը անդու զործունէութիւն մը եղած է: Կազմով առողջ, հոգիովը ժողովրդանուէր, սկիզբէն ի վեր նույրուած է Նիկոմիդիոյ վիճակին եւ հաւատարիմ մնացած է իր Աթոռուն, զոր ստիպուեցաւ Թողուտ տարագրութեան մէջ ալ իր ժողովուրդէն չզատուելու համար:

Ստեփանոս Սրբազն այն հագուազիւտ առաջնորդներէն է որ ծերացած է իր Աթոռուն վրայ եւ արժանի է Եթիոն տարտոսին, իրրեւ իրապէս շինուար Առաջնորդ մը, որ իր զործունէութիւն խորւնկ նետքերը թողած է իր վիճակին ամենէն յետին անկիւնն իսկէ:

Մեր խորին համակրանքն ու յարգանքը ալեփառ Սրբազնին, իր Վաթունամեայ Քահանայութեան Ցորդինանին առթիւ: